ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՌՑԱՆՑ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

24.07.2020 17:02

Հարգելի՝ փաստաբաններ,

Տեղեկացնում ենք, որ հեռավար դասընթացներին զուգահեռ կարող եք վերապատրաստման ձեր պարտադիր ժամանաքանակը լրացնել՝ առցանց դասընթացներին մասնակցելով: Այս դասընթացները նախապես տեսանկարահանված և տեղադրված են առցանց հարթակում, որը կարող եք դիտել ձեզ հարմար ցանկացած ժամանակ:

Առցանց դասընթացներին մասնակցելու համար անհրաժեշտ է մուտք գործել http://olp.advocates.am/ հղմամբ, այնուհետև գրանցվել, ընտրել վերապատրաստման դասընթացի թեման, պատասխանել նախնական հարցերին, դիտել տեսանյութը, իսկ վերջում պատասխանել նաև վերջնական հարցերին:

Առցանց հարթակում գրանցվելու և դասընթացներին մասնակցելու համար կարող եք հետևել ուղեցույցին (http://olp.advocates.am/assets/docs/instruction.pdf) և տեսաուղեցույցին (http://olp.advocates.am/assets/docs/instruction.mp4):

Առցանց հարթակում ներկայումս առկա դասընթացներ.

1. Առանձին հանցագործությունների որակման առանձնահատկությունները.
2. Դեոնթոլոգիա և մասնագիտական կարգավիճակ.
3. Մարդու կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունների որակման առանձնահատկությունները.
4. Աշխատանքային իրավունք.
5. Դատարան դիմելու իրավունքը վարչական դատավարությունում.
6. Ժառանգության ինստիտուտ.
7. Վնասի հատուցման ինստիտուտ.
8. Գենետիկայի կիրառումը դատաբժշկական և քրեագիտական փորձաքննություններում.
9. Քիմիկոտոքսիկոլոգիական փորձաքննություն.
10. Բուժաշխատողի մասնագիտական իրավախախտումներ.
11. Դատաբժշկական փորձաքննությունների իրականացման կարգը և տեսակները.
12. Քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում և տարածության մեջ.
13. Վկաների առերես հարցաքննության իրավունքը ըստ ՄԻԵԿ-ի.
14. Պաշտպանն առաջին ատյանի դատարանում.
15. Պաշտպանը մինչդատական վարույթում.
16. Պաշտպանական ռազմավարության և մարտավարության մշակում.
17. Ապացույցներ.
18. Մինչդատական կալանքի թույլտվության վերաբերյալ դատական ակտերի առարկան և չափորոշիչները:

Հավելյալ հարցերի դեպքում, դրանք կարող եք ուղղել վերապատրաստման հարցերով համակարգող Անի Ղարիբյանին (էլեկտրոնային փոստի հասցեն՝ ani.gharibyan@advocates.am):

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })